# Ազերիներն ուզում են շահումյանցիներին գլխովին կոտորել

Շահումյանի շրջանում դրությունը չափազանց բարդացավ հատկապես նրա տարածքից զորքերը դուրս բերելու հրամանից հետո:

Շրջանի սահմանային բնակավայրերում սկսեցին կուտակվել ադրբեջանական զինյալ խմբեր և օմոնականներ: Հուլիսի 7-ին գնդակոծվեցին շրջանի Մանաշիդ, Բուզլուխ և Էրքեջ գյուղերը: Տեղաբնակները չզիջեցին և կազմակերպելով ուժեղ դիմադրություն, հրոսակներին չթողեցին մտնել հարազատ գյուղերը: Գիշերը մարտը դադարել էր, սակայն գյուղերը մնում էին շրջափակված զրահամեքենաներով և մարտական այլ տեխնիկայով:

Ըստ հավաստի աղբյուրներից ստացված տեղեկությունների, ադրբեջանական ղեկավար շրջանները որոշել են հայաթափել ամբողջ Շահումյանի շրջանը և Մարտակերտի շրջանի հյուսիսային մասը, որը հարում է Շահումյանին: Լրտեսները պնդում են, թե ի տարբերություն Գետաշենի և Մարտունաշենի, այստեղ տեղի կունենա հայերի կոտորած, քանի որ ոչ-ոք չի ուզում տեղահանման գլխացավանքի մեջ ընկնել և ցանկանում են հայերին ոչնչացնելով ազատվել նրանցից:

Մարտակերտի շրջանի Կիչան և Մոխրաթաղ տեղամասում դրությունը լարվել է այն բանից հետո, երբ անասնագողության նպատակով գյուղերի տարածք խուժած 4 գողեր ավտոմատ հրազենից կրակ են բացել գյուղացիների վրա և փոխհրաձգության ժամանակ չորսն էլ սպանվել: Ավազակներին օգնության հասած օմոնականների և տեղաբնակների միջև մարտը վերջացավ նրանով, որ երկուստեք նոր զոհեր եղան և 10 ադրբեջանցիներ կալանավորվեցին: Ստեփանակերտի պարետատունը, որ նախկինում հանել էր Կիչանի մերձակա կամուրջի մոտ տեղակայված հսկիչ կետը, ստիպված էր նորից վերականգնել, քանի որ Աղդամի շրջանից հավաքված զինյալ խմբերն ու խառնամբոխը ցանկանում էին ներխուժել գյուղերը: